# ՆԻՒԹԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՆԵՐՍԷՍ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք համազգական Նախամեծար աթոռոյ արարատեան մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։ Առաքեմ 'ի կօնսիստօրն զօրինակ գրութեան Նորուն պայծառութեան Ալէքսէյիչ Պերովսկի մինիստրի ներքնային գործոց 'ի 3 Ն փետրվարի այսմ 1850 ամի համարաւ 353, յաղագս կայսերական հրամանաց, զի ուսուցիչք օրինաց Աստուածայնոց յամենայն ուսումնարանս սկսեալ 'ի բարձրագոյն ուսումնարանաց մինչև ցժողովրդական դպրոցս եղիցին կարգեցեալ ունեալ անձինք վարուք և բարուք օրինական անձինք և աշխատասէրք վասն տպաւորելոյ 'ի սիրտս և 'ի հոգիս աշակերտաց զսէր և զերկիւղն Աստուծոյ և զամենայն զպարտաւորութիւնս քրիստոնէական վայելչական կացութեանց և յանձն առնեմ կօնսիստօրին բարւոք հայեցողութեամբ վասն ամենայն քահանայից եղելոց 'ի նմին պարտաւորութեանց ուսուցչութեան Աստուածային օրինաց և պատուիրանաց ոչ անհոգանալ հասու լինել վասն չափու իւրաքանչիւրոց տեղեկութեանց և վասն յօժարութեանց և պարտաւորութեանց կամաց նոցին յաղագս ներգործելոյ 'ի միտս և 'ի կամս աշակերտաց զկատարեալ ծանօթութիւն վասն ամենայն դասառելոցն, և վասն վարուց նոցին և բարուցն, զի ընդ բանիցն վասն ուսուցչութեանց եղիցին և անձնական որպիսութիւնք նոցին օրինակական յորդորիչք առ պարտաւորելոյ զանձինս իւրեանց լինել Աստուծոյ արարչի իւրեանց այնպէս՝ որպէս և պատուիրանն է Քրիստոսական «Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զհայրն ձեր, որ յերկինս է։ Յամի 1850 և ազգական 1299 յուլիսի 3-ն 'ի Թիֆլիզ։

*Կաթողիկոս ամենայն Հայոց ՆԵՐՍԷՍ*